ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ (ՀԻՍՆԱԿԱՑ) ՊԱՀՔԸ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Ա.

Հայոց մեջ, սկսած վաղ միջնադարից, կենցաղավարել են ոչ միայն օրապահքերը (չորեքշաբթի, ուրբաթ) և Զատկի տոնին նախորդող Քառասնորդաց պահքը, որոնց մասին վկայում են տոնացույցի առաջին և երկրորդ խմբագրությունները՝ կատարված Սահակ Պարթևի և Հովհան Մանդակունու կողմից[1], այլև Սուրբ Ծննդյան[2] և Վարդավառի տոներին նախորդող մեծ պահքերը: Ընդհանրական և տեղական բնույթի ժողովների կանոններում այդ պահքերի վերաբերյալ հիշատակություններ կամ մասնավոր հրահանգներ չկան:

Մատենագրական, ձեռագրական, կանոնական, վիմագրական և ազգագրական սկզբնաղբյուրները Վարդավառից առաջ ընկած մեծ պահքը հիշատակում են "Հիսնակաց" կամ "Քառասնորդաց պահք" անուններով:

Վարդավառի Մեծ պահքն սկսվում է Հոգեգալստյան կիրակիին հաջորդող երկուշաբթի օրվանից, սակայն դրա մասին տոնացույցի որևէ խմբագրությունում հրահանգ չկա[3]: Փոխարենն այն բազմիցս հիշատակվում է այլ աղբյուրներում: Այսպես. VIII դ. Խոսրովիկ Թարգմանիչը հիշում է երեք մեծ պահքերը՝ առաքինի անձանց կողմից՝ "այժմ եւս զերիս յիսներեակսն …անխափան պահեն" բովանդակությամբ, որը, ըստ Վ. Հացունու, երեք հիսնակների մասին ամենավաղ հիշատակությունն է[4]: Պետք է նշել, որ սա առաջին վկայությունն է միաժամանակ երեք հիսնակների մասին: Ասվածը

---

[1] **Վարդանյան Ռ.**, *Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Ե., 1999, էջ 613, 627-628:*

[2] *Հեղինակը "Աստվածահայտնության քառասնորդաց (Հիսնակաց) պահքը (պատմական համառոտ ակնարկ)" վերնագրով հոդված է ներկայացրել 2015 թ. նոյեմբերին Հնագիտության և ազգագրության ինստիտուտում կայացած "Հայ ժողովրդական մշակույթ. XVII" խորագրով գիտաժողովին, որի ընթացքում ներկայացված հոդվածների ժողովածուն լույս կտեսնի առաջիկայում:*

[3] *Տե՛ս Սահակ Պարթևի խմբագրած "Կանոնք ընթերցվածոց"-ը Հովհան Ման-դակունու կատարած երկրորդ (V դ.), Կոմիտաս Աղցեցու՝ երրորդ (VII դ.), Հովհան Օձնեցու՝ չորրորդ խմբագրությունները (VIII դ.), Սողոմոն Մաքինացու կազմած տոնական ճառընտիրը (VIII դ.), Ատոմ Վարագեցու խմբագրած Հոռոմադիրը (X դ.), Գրիգոր Վկայասերի Տոնանամակը (XI դ.), մինչև XVIII դարը կատարված խմբագրությունները, Սիմեոն Երևանցու կատարած՝ տոնացույցի վերջին խմբա-գրությունը /1774 թ./ (տե՛ս* **Վարդանյան Ռ.**, *նշվ. աշխ., էջ 212-213, 228-229, 274-275, 450-454):*

[4] **Հացունի Վ.**, *Ճաշեր և խնճոյք Հին Հայաստանի մէջ, Վենետիկ-Ս. Ղազար, ՌՅԿԲ-1912, էջ 425-427:*

կարելի է փաստել նաև հենց այդ վկայության մեջ առկա "այժմ" բնորոշմամբ, ինչը հուշում է VIII դ. առաջ այդ պահքերի գոյության և միգուցե ավելի տարածված լինելու մասին, իսկ արդեն VIIIդ. դրանք պահպանված են եղել միայն առավել բարեպաշտ անձանց շրջանում:

Վարդավառի Մեծ պահքի մասին վկայում են Մովսես Քերթողահայր Սյունեցին "Պայծառակերպության ճառում"[5] (ըստ Ռ. Վարդանյանի՝ գրված 703 թ.[6]), Կանոնագիրք հայոցը՝ X-XI և հետագա դարերի կանոններով[7], Մատթեոս Ուռհայեցին[8], Հայսմավուրքը[9], Դավիթ Ալավկա Որդին[10], XII դ. մի տոնապատճառ[11], Վարդան Այգեկցին[12], Կիրակոս Գանձակեցին[13], Հով-հաննես, Երզնկացին[14], Սիմեոն Այրիվանեցին[15], Գրիգոր Տաթևացին[16]:

Չլինելով տոնացուցային պահք՝ այն ընդհուպ XX դ. սկզբները կենցաղավարել է վանքերում, աշխարհիկ վերնախավում և ժողովրդի տարբեր շերտերում: Այդ են վկայում վիմագրերում հիշվող աշխարհիկ պատվիրատուի կողմից Վարդավառին նախընթաց Մեծ պահքին Պատարագ պատվիրելու և որոշակի անձանց հիշելու մասին հրահանգները: Այսպես, Անիի Մայր տաճարի (989-1001 թթ.)՝ Կատրանիդե թագուհու թողած շինարարական արձանագրության մեջ ասվում է. "...ՀՐԱՄԱՅԱԼ ԵՄ ԵՍ ՏԷՐ / ՍԱՐԳԻՍ ՍՊԱՍԱՒՈՐԱՅ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՅԵՏ ԷԼԻՑ ԲԱՐԷՊԱՇՏ ԹԱԳՈՒՀՈՅՍ ԶՎԱՐԴԱՎԱՌԻՆ ՅԻՍ/ՆԵԱԿՍՆ ՄԻՈՎ ՔԱՌԱՍՆԻԻ ԿԱՏԱՐԵԼ ԱՆԽԱՓԱՆ / ՄԻՆՉԵՒ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ"[17]:

Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու XI դ. շինարարական արձանագրությունը հրահանգում է. "ՅԵՏ ԵԼԻՑ ԻՄՈՑ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԵԴԻ ԼՈՒԾ Ի ՎԵՐԱՅ ՍՊԱՍԱՒՈՐԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԶՎԱՐԴԱՎԱՌԻՆ :Խ: ՈՒՆԱՆ

---

[5] **Մովսես Սիւնեցի,** *Յաղագս Վարդավառին խորհրդոյ, Մատենագիրք հայոց, հ. Դ, Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 429-436:*

[6] **Վարդանյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 207-209:*

[7] ***Կանոնագիրք հայոց,*** *հ. Բ, Ե., 1970, էջ 175-177, 277-279:*

[8] **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 300:*

[9] ***Գիրք որ կոչի Այսմաւուրք***, *Կ. Պոլիս, 1730, էջ զճզ:*

[10] **Աբրահամյան Ա.,** *Դավիթ Ալավկա Որդու կանոնները (Էջմիածին, Ժ տարի, 1953, մարտ, էջ 54-55):*

[11] *Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (այսուհետև՝ ՄՄ), N 1007, թ. 393բ-394բ:*

[12] **Հացունի Վ.,** *նշվ. աշխ., էջ 428:*

[13] *Պատմութիւն հայոց արարեալ* **Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ,** *Թիֆլիս, 1909, էջ 196:*

[14] **Յովհաննէս Երզնկացի**, *Խրատ բոլոր քրիստոնեաներուն, աշխարհաբարի վերածեց՝ Անուշավան վրդ. Դանիէլեան, Անթիլիաս, 1984, էջ 73:*

[15] **Ղևոնդ Ալիշան**, *Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 569-570:*

[16] **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 649-650:*

[17] ***Դիվան հայ վիմագրության***, *պր. I, Անի, Ե., 1965, էջ 35:*

ԱՆԽԱՓԱՆ ԿԱՏԱՐԵԼ ՄԻՆՉԵՒ ԳԱԼՈՒՍՏՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ Զ... [ՈՐ]ԴԻՈ ԳԱԳԿԱ ՍՄՊԱՏԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ"[18]:

Վարդավառի Մեծ պահքը հիշվում է նաև Հաղպատավանքի Ս. Նշան եկեղեցու՝ 1063 թ. նվիրատվական արձանագրության մեջ. "ԵՒ ԿԻՒՐԻԿԷԻ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԵՑԻՆ ԻՆՁ ԶՎԱՐԴԱՎԱՌԻՆ ՔԱՌԱՍՈՒՆՔՆ ՄԻՆՉԵՒ Ի ՎԱԽՃԱՆ ԱՇԽԱՐՀԻ"[19]:

Ուշագրավ է Անիի՝ Գրիգոր Պահլավունու եկեղեցու արձանագրությունը (X դ.), որը թույլ է տալիս ենթադրել, որ ոչ բոլոր վանքերում են հետևել երեք հիսնակներին. "ԿԱՄԱՒՔՆ ԱՅ. ԵՍ ՎԱՀՐԱՄ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ԵՏՈՒ ԶԻՄ ՈՐԴՈՅՆ ԶԱՊՈՒԽԱՄՐԻ ՈԳԵԲԱԺԻՆ ԵՒ Գ/ՆԵՑԻ :Բ: ԿՈՒՂՊԱԿ ԶԼՈՐԱԳՈՅՆԻՆ ԵՒ ԶՈՐՍԱՒՏԻՆ, ՅՈՇԱԿԱՆԱՑ. ԵՏՈՒ Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՔԱՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՈՐ ՈՒՆԻՆ ՏԱՐԻՆ :Գ: ՔԱՌԱՍՈՒՆՔ..."[20]:

Նույնն է փաստում նաև Սյունիքի Քարկոփ վանքի Ս. Աստվածածին եկեղեցու X դարասկզբի արձանագրությունը[21]: Այս Մեծ պահքի կամավորության մասին է վկայում Եպիփանին վերագրվող, սակայն X-XI դդ. թվագրվող կանոնում[22]. "Եւս առաւել ի վերայ այնոցիկ եկեսցեն զշնորհքն Աստուծոյ որ զերեք յիսունսն պահեսցեն յանուն Սուրբ Երրորդութեանն՝ զՁատիկն եւ զՎարդավառն եւ զՅայտնութեանն եւ ի փրկութեան Տեառն առցեն զաւետիսն"[23]: Կամավորության մասին է խոսում նաև այդ հիսնակները խախտելիս պատիժներ կրելու վերաբերյալ սահմանումների բացակայությունը:

Երեք մեծ պահքերի կանոնականացված չլինելու մասին է փաստում նաև այն հանգամանքը, որ դրանք հրահանգվել են ապաշխարողներին կամ տոնացուցային պահքի օրեր խախտած անձանց՝ որպես հատուցում: Բարսեղի կանոններում բազում մեղքերի մեջ ընկածին, մի շարք այլ հրահանգների հետ միասին, թելադրվում է երեք Քառասնորդները պահել[24]:

---

[18] Նույն տեղում, էջ 45:

[19] Նույն տեղում, պր. IX, Լոռու մարզ, Ե., 2012, էջ 137:

[20] Նույն տեղում, պր. I, էջ 32:

[21] Նույն տեղում, պր. III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, Ե., 1967, 206 էջին հաջորդող ներդիր:

[22] **Վարդանյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 632:*

[23] ***Կանոնագիրք հայոց***, *հ. Բ, էջ 277-279:*

[24] "Որք ի բազում ծովացեալ մեղացն խորս ընկղմեցան ոչ կարելով հասանել ի նաւահանգիստն խաղաղութեան ի ձեռն ազգի ազգի առաքինութեան եւ ապաշխարութեան, յետոյ երկիւղիւ մահու ըմբռնեալ եւ ի կենդանութեանն ի կենդանի պատարագն եւս ապաւինեցան հասանելով ճշմարիտ թողութեան, արժանի է, բայց կատարեսցէ զնա ճշմարիտ հաւատով եւ սիրով եւ յուսով: ... եւ զԳ Քառասնորդսն՝ զտէրունականն եւ

Հովհաննես Երզնկացին (XIII դ.) նույնպես հորդորում է, որ օրապահքերը, շաբաթապահքերը և այլ պահքերը լուծողները, որպես ապաշխարություն, երկու Քառասնորդացները (Սուրբ Ծննդյան և Վարդավառի) պահեն[25]: Ըստ այդմ՝ Հացունին իրավամբ եզրակացնում է, որ եթե պահեցողության այս ձևը պատիժ էր[26]: Այդ ժամանակաշրջանը նկարագրելով՝ Կիրակոս Գանձակեցին, խոսելով Հովհաննես վարդապետի գործունեության մասին, նշում է. "...դեռ ցայն ժամանակն ի տեղիս տեղիս լուծանէին զշաբաթ և զկիրակէ սուրբ քառասնորդաց աղուհացիցն": Ապա հավելում է. "...Եւ այսպէս հաստատութիւն կալաւ յամենայն տեղիս՝ զյիսներրեակն պահօք վճարել, զոր առաջին կէսք պահէին և կէսք ո՛չ"[27]:

Գրիգոր Տաթևացին հիշում է, որ աշխարհիկ դասը միայն Աղուհացից պահքն էր պահում. "Կարգաւորք երեք քառասունք պահեն, այլ աշխարհականք՝ միայն զաղուհացիցն պահեն"[28]:

Գանձակեցու և Տաթևացու վկայությունները փաստում են այդ հիսնակների կամայական լինելու մասին:

Ըստ ամենայնի՝ վանական միջավայրում ևս XV դ. երեք մեծ պահքերը կամայական են եղել, քանի որ Սիմեոն Այրիվանեցին (XV դ.), գնալով Զագավանք, փորձում է վերահաստատել "զամենայն բարի կարգս և օրէնս" և միայնակյացներին ու ապաշխարողներին հրամայում է "զերեք յիսնակսն կենայ պահօք շաբաթ եւ կիրակին, զոջացեալքն միայնակեացքն և ճգնաւորքն՝ բոլոր կենան զյիսնակաց պահսն"[29]:

Ազգագրական աղբյուրները փաստում են, որ մինչև XIX դ. կեսերը և XX դ. սկզբները ժողովրդի մեջ տարածված է եղել Հովհաննես Կարապետի կամ Օխտն անվան պասը, որը պահել են Համբարձումից կամ Հոգեգալստից մինչև Վարդավառ, երբեմն յոթ տարի շարունակ: Վարդավառի հիսնակը կամ Ս. Կարապետի պասը պարտադիր չի եղել, այլ համարվել է կամավոր պաս: Ուսումնասիրելով այս պասի վերաբերյալ ազգագրական և գեղարվեստական գրականության մեջ սփռված նյութերը՝ կարելի է եզրակացնել, որ այն կարծես եղել է ուխտի պաս, քանի որ պահել են որոշակի նպա-տակի համար և յոթ տարին լրանալուց հետո ուխտի են

---

*զառաքելականն եւ զմարգարէականն սուրբ պահեսցէ եւ տուընջեան եւ զիշերոյն աղաւթից զԲ բաժանեալ կանոնն անխափան կատարեսցէ" (**Կանոնագիրք հայոց**, հ. Բ, էջ 175-177):*

[25] *"Եթէ մեկը չորեքշաբթին և ուրբաթը, շաբաթապահքը եւ կամ այլ պահք լուծէ ձուկով կամ գինիով, երեք տարի թող ապաշխարէ, երկու քառասնապահքերը եւ տարւոյն բոլոր երկուշաբթիները սրբութեամբ պահք բռնէ եւ օրական հարիւր հիսուն անգամ ծնրադրէ"* (**Յովհաննէս Երզնկացի**, *նշվ. աշխ., էջ 73):*

[26] **Հացունի Վ.**, *նշվ. աշխ., էջ 429:*

[27] *Պատմութիւն հայոց արարեալ* **Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ**, *էջ 196:*

[28] **Գրիգոր Տաթևացի**, *Զմեռան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 148:*

[29] **Ղևոնդ Ալիշան**, *Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 569-570:*

գնացել Մշո Գլակա վանք՝ Հովհաննես Մկրտչի մատուռ-գերեզմանին[30]: XX դ. սկզբի պատմական հայտնի անցքերից հետո այն մոռացվել է[31]:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ Զատկի, Ծննդյան և Վարդավառի Մեծ պահքերը թե՛ աշխարհիկ, թե՛ վանական միջավայրերում կենցաղավարել են անձի կամ տվյալ վանքի ներքին որոշման համաձայն: Դրանք պարտադիր են եղել ապաշխարողների համար: Հիսնակի ընթացքը զատկական Մեծ պահքի օրինակով նույնն է եղել[32]: IX դ. 40-ականին Հոգեգալստից հետո ընկած չորրորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը սահմանված "Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսավորչին" հիշատակի օրվան նախընթաց պահքն ստացել է Լուսավորչի անունը: Ուշ շրջանում այն անվանվել է նաև "միջինք ամառան Յիսնակացն"[83], "Այս եղեւ ի պահն սուրբ Գրիգորի, որ ի միջինք ամառան աղուհացից"[84]:

Մատթեոս Ուռհայեցին, Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի մահվան ժամանակը նշելու համար Վարդավառի պահքը հիշելով (խոսքը 1105-1106 թթ. մասին է), գրում է. "Եւ եղեւ ի Տրէ ամիս, յառաջին շաբաթն ամառան աղուհացիցն, յաւուր շաբաթու վախճանեցաւ սուրբ Հայրապետն Տէր Գրիգորէս, և թաղեցաւ մեծաւ հանդիսիւ ի Կարմիր վանքն մերձ ի Քեսուն"[85]:

Ստեփանոս Գոյներ Երիցանցն իր ինքնագիր տոնացույցում (XIV դ.) Հոգեգալստյան կիրակին անվանում է "Բարեկենդան ամառան աղուհացից"[86]: Միջինքի և աղուհացի առկայությունը նույնպես խոսում են պահքի զուսպ ընթացքի մասին:

ՄՄ 1007 թվակիր XII դ. Տոնապատճառ ժողովածուի (որն, ըստ Ռ. Վարդանյանի, Սամուել Կամրջաձորեցու ժողովածուի ընդօրինակություն է[37]) "Յաղագս տապանակին խորհուրդ" ճառի վերջնամասում "Զի՞նչ է այս. Գ. նաւակատիքս զի ոչ գոյ մասկերութիւն ի մէջ քրիստոնէից" հարցման

---

[30] **Մխիթարեանց Աղ.,** *Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետև՝ ԷԱԺ), հ. Ա, Մոսկուա-Ալէքսանդրապոլ, 1901, էջ 272:* **Լալայեան Ե.,** *Նոր Բայազետի գավառ, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գիրք XVII, Թիֆլիս, 1908, էջ 124:* **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ Կեսարիոյ. Տեղագրական, պատմական, ազգագրական ուսումնասիրութիւն, հ. Բ, Գահիրէ, 1937, էջ 1748:*

[31] *Ներսես Ակինյանը ևս այդպես է կարծում (տե՛ս* **Ակինեան Ն.,** *Քննութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու եւ Հայոց եկեղեցական տարին Է դարու սկիզբը, հ. Ա, Վիեննա, 1950, էջ 134-135):*

[32] *Այդ մասին տե՛ս նաև* **Հացունի Վ.,** *նշվ. աշխ., էջ 428:*

[33] **Վարդանյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 631:*

[34] **Մատթէոս Ուռհայեցի**, *նշվ. աշխ., էջ 427:*

[35] *Նույն տեղում, էջ 300:*

[36] **Բաբգէն ծ. վարդ. Կիւլէսէրեան,** *Ժողովուրդին տօնացոյցը, Կ. Պոլիս, 1901, էջ 59:*

[37] **Վարդանյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 219-220:*

պատասխանը բացահայտում է երեք հիսնակների ընթացքը, որոնց ժամանակ հրահանգվում է անգամ մատաղի միս չուտել[38]:

Ուշագրավ է, որ Վարդավառի Մեծ պահքը տոնացույցում բացակայում է, սակայն տոնապատճառներում կա վերջինիս մեկնությունը: Դավիթ Ալավկա Որդին իր "Կանոնական օրինադրություն" աշխատության Ղ կանոնում նույնպես խոսում է երեք հիսնակների ընթացքի մասին, ինչը գրեթե նույնական է վերը նշված տոնապատճառի հրահանգներին[39]: Սակայն նա նաև արգելում է ուտել միս ու գինի՝ խրախուսելով դրանք անցկացնել "ծոմաջան պահիք"[40]:

Վարդան Այգեկցին, վկայակոչելով Հովհաննես Տավուշեցուն, "զերիս յիսնական անհաց և անջուր կատարեր", այսինքն՝ ծոմ պահելու հրահանգ է տալիս[41]: Ժուժկալության այս ձևը, ըստ Հացունու, կամավոր էր և անհատական[42]: Այս պասի ընթացքում շաբաթ և կիրակի օրերին կերել են ուտիսի կերակուրներ, բայց ոչ մսեղեն: Մաստակ չեն ծամել՝ մեղք համարելով[43]:

Ինչպես Սուրբ Ծննդյանը նախորդող մեծ պասը, Վարդավառինը նույնպես կատարել է տնտեսական աշխատանքների ժամանակափուլերի բաժանման դեր: Այդ մասին են վկայում պահքի շաբաթներին տրված անունները: Օրինակ՝ Հոգեգալստին հաջորդող Եղիական պասը, որի ժամանակ խոտ են հնձում, կոչվել է Խոտհնձի պաս: Խոտհնձի կամ Խոտքրղի պաս է կոչվել Վարդավառի Մեծ պահքի չորրորդ շաբաթվա՝

---

[38] "Հարցումն. Զի՞նչ է այս. Գ. նաւակատիքս... Պատասխանի. Նաւակատիք բարձրագոյն տեսանի եւ աստուածատեսակագոյն քան զամենայն տաւնս: ...Գ տաւնս զոր տաւնէ եկեղեցի. նախ մաքրութեան կարաւտանա Ծ աւրքք աղաւթիցն: Եւ ծոմաջանութեան որոշմամբ եւ զատութեամբ յամուսնական անկողնոց: ...Արդ են ոմանք ի տգետ քահանայից հրաման տալ ի մատաղամիսք կերակրիլ որոշէ հաճոյ իմաստնոց, զի մի է մատաղամիս եւ այլ միս: ...Արդ, մի ոք կերիցէ հաւասար յամենայն մսո: Ապա թէ հիւանդ է անկար թողացուց անեն պատուիրանքն: Այլ առողջ մարմնով եւ կատարեալ հասակաւ յայս. Գ. Խ ունս բնաւ միս մի՛ ոք կերիցէ՝ Զատկին, Վարդավառին, եւ Յայտնութեան զի քառասունք աւրինակ կենացն Ադամա ունի որ ի դրախտին..." (տե՛ս **ՄՄ**, N 1007, թ. 393բ-394բ):

[39] **Աբրահամյան Ա.,** *Դավիթ Ալավկա Որդու կանոնները (Էջմիածին, Ծ տարի, 1953, մարտ, էջ 54-55): Այն աննշան խմբագրումներով համընկնում է վերոնշյալ տոնապատճառի տվյալ հատվածին (նույն տեղում: Հմմտ.* **ՄՄ**, *N 1007, թ. 393բ-394բ): Դավիթ Ալավկա Որդին իր կանոններում օգտվել է ոչ միայն եկեղեցական ժողովների և հայրերի կանոններից և ավանդություններից [տե՛ս* **Կոստանեանց Կ.,** *Դաւիթ վարդապետ Ալաւկայ Որդի (ԱՀ, տասներորդ տարի, գիրք 15, Թիֆլիս, 1917, էջ 62)]:*

[40] **Աբրահամյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 54-55:*

[41] **Հացունի Վ.,** *նշվ. աշխ., էջ 428:*

[42] *Նույն տեղում:*

[43] **Լալաեան Ե.,** *նշվ. աշխ., էջ 124:*

Լուսավորչի գյուտ նշխարաց տոնին նախորդող հնգօրյա պասը[44]. "Էքսի օրը երկուշաբթի, Խոտհնձի պասն ա[45]", "Դեռ Խոտհնձի պասն էսօր ենք մտել"[46]: Այն հայտնի է նաև Խոտքրդոց անվամբ և տևում է հունիսի 15-ից մինչև հուլիսի 15-ը, երբ գյուղացիք խոտ են քաղում[47]: Կարծում ենք՝ Խոտհնձի պահք բնորոշումը Վարդավառի Մեծ պահքի տարբեր շաբաթներին համընկնելը պայմանավորված է Վարդավառի, հետևաբար՝ տոնին նախորդող Մեծ պահքի շարժականությամբ:

Վարդավառի Մեծ պահքը չի կանոնականացվել, սակայն X-ից մինչև XI դ. կեսերին այն տոնացույցում տեսնում ենք ընդմիջարկված շաբաթապահքերով՝ մեկ շաբաթ պահք, երկու շաբաթ ուտիք հաջորդականությամբ: Այսպես. առաջին շաբաթը Հոգեգալստին հաջորդող հնգօրյա պահքն է, որը հայտնի է նաև "Եղիական պահք" անվամբ (քանի որ այդ պահքին հաջորդող շաբաթ օրը Եղիա մարգարեի տոնն է):

Հոգեգալստից հետո եկող պահքի մասին հնագույն "Կանոնք ընթերցուածոց"-ներում որևէ հիշատակություն չկա: Ռ. Վարդանյանը, հիմնվելով Սամուել Կամրջաձորեցու "Տաւնապատճառի", Մատթեոս Ուռհայեցու "Ժամանակագրության" տվյալների վրա, եզրակացնում է, որ Հոգեգալստից հետո եկող հնգօրյա պահքը, որն ստացել է Եղիա մարգարեի անունը, կիրառության մեջ եղել է X դ. վերջերին և XI դ. սկզբներին, ինչը հավանական է դարձնում դրա սկզբնավորվելը VIII դ. 20-ական թթ. կամ IX դ. չորրորդ քառորդից, այլ խոսքով՝ Հովհան Օձնեցու տոնացույցի առաջին կամ երկրորդ խմբագրությունների ժամանակ: Ներսես Շնորհալին Հոգեգալստյան կարգը փոխել է՝ մեկօրյայից վերածելով ութօրյայի, սակայն պահքի հինգ օրերը մնացել են անխախտ: Հետագայում Սիմեոն Երևանցին այդ կարգը պահպանել է[48]:

---

[44] **Մխիթարեանց Աղ.,** *նշվ. աշխ., էջ 260, 278:* **Գաբիկեան Կ.,** *Բառգիրք սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952, էջ 258:* **Մալխասյան Ստ.,** *Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944, էջ 288:*

[45] **Պոռշյան Պ.,** *Սոս և Վարդիթեր, Երկերի ժողովածու, հատոր առաջին, Ե., 1962, էջ 170:*

[46] **Ամատունի Ս.,** *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 289:*

[47] **Գաբիկեան Կ.,** *նշվ. աշխ., էջ 258:*

[48] *Նույն տեղում, էջ 628-30:* **Բարգէն ծ. վարդ. Կիլէսէրեան**, *նշվ. աշխ., էջ 58:*

Առաջին դարում այլազգի քրիստոնյաները ևս Հոգեգալուստը մի օր էին տոնախմբում, իսկ հաջորդ օրերը պահք էին պահում: Այս մասին վկայում է մեծն Լևոնը Պենտեկոստեի ճառում: 567 թ. Տուրովի ժողովի 67-րդ կանոնն ասում է. "զ. թե զկնի յիսներեկին բոլոր շաբաթն խստիվ պահեսցի": Իսիդորոս Հիսպալեցին ասում է (գիրք ա, գլ. ԿԵ) "...զկնի Պենտէկոստէին պահել ի կատարումն Բանին Քրիստոսի, թէ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն": Լատինացիների մոտ VIII դարի նման հիշատակություն կա. Պենտեկոստեն ութ օր կատարել, իսկ հույները մինչև այսօր ութօրեք չեն կատարում (տե՛ս **Աւետիքեան Գ.**,*Բացատրութիւն շարականաց, Վենէտիկ, ի վանս սրբոյն Ղազարու,1814, էջ 570):*

Չորրորդ կիրակին Գրիգոր Լուսավորչի Գյուտ նշխարաց տոնին նախորդող հնգօրյա՝ երկուշաբթիից ուրբաթ ընկած պահքն է, որը սահմանվել է IX դ. չորրորդ քառորդին: Սիմեոն Երևանցին այս կանոնը ևս պահպանել է[49]:

Վերջին՝ յոթերորդը Վարդավառի շաբաթապահքն է, որի մասին առաջին հիշատակությունները վերագրվում են X-XI դդ.: Ժամանակաշրջանի մատենագիր Սամուել Կամրջաձորեցին, որը մասնակցել է Հայսմավուրք և ՏոնապատՃառ ժողովածուների կազմելու և խմբագրելու աշխատանքներին, տեղեկացրել է այդ պահքի մասին[50]:

Ռ. Վարդանյանը կասկածից վեր է համարում այն, որ Վարդավառի շաբաթապահքը տոնացույց է մտել X դ. վերջին, ինչը նշանակում է, որ այն եղել է ավելի վաղ, ըստ ամենայնի, թերևս, Հովհան Օձնեցու տոնացույցի երկրորդ՝ IX դ. չորրորդ քառորդում կատարված խմբագրության ժամանակ[51]:

Այսպիսով, տեսնում ենք, որ Հոգեգալստից մինչև Վարդավառ յոթ շաբաթներից առաջինը պահք է, որն ստացել է Եղիա մարգարեի անունը, ապա երկու շաբաթ ուտիք, չորրորդը Գյուտ նշխարաց տոնին նախորդող պահքն է, որին ևս երկու շաբաթ ուտիք է հաջորդում, և յոթերորդը Վարդավառի շաբաթապահքն է:

Թերևս այս երկարամյա շրջանի պատՃառով յոթ շաբաթներն ամբողջությամբ պահքի չեն վերածվել:

Վերոգրյալը կարող է հաստատել նաև Հարության, Աստվածահայտնության և Վարդավառի հիսնակների մասին Գրիգոր Տաթևացու հետևյալ հաղորդումը. "...Զի Կ օր ուրբաթ եւ չորեքշաբթի, եւ Գ քառասունք պահք է ի բոլոր տարին: Այս առաքելադիր է: Իսկ հայրապետքն բաժանեցին զերկու քառասունսն ի շաբաթապահս: ... Եւ Գ ամիսք աղուհացք է եւ յիսունք"[52]:

Ենթադրելի է, որ ինչպես Սուրբ Ծննդյան, այնպես էլ Վարդավառի հիսնօրյա պահքն ամբողջությամբ տոնացույցում չընդգրկելը հիմնականում պայմանավորված էր տարին երեք հիսնակներով չծանրաբեռնելու հանգամանքով: Այսպես. պահքի ընթացքում, ըստ եկեղեցական կարգի, հոգևոր զսպվածության հետ միաժամանակ պետք է զերծ մնալ նաև որոշակի սննդամթերքներից, ոգելից ըմպելիքներից, ինչպես նաև կենցաղավարման որոշ նորմերից: Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ հավատացյալները հիս-նակների ընթացքում պետք է զրկվեին հաղորդությունից, իսկ այս խորհուրդը կարևոր է թե՛ հավատացյալի ներանձնական հոգևոր կյանքի,

---

[49] **Վարդանյան Ռ.**, *նշվ. աշխ., էջ 630-31:*

[50] *Նշվ. աշխ., էջ 632:*

[51] **Վարդանյան Ռ.**, *նշվ. աշխ., էջ 450, 633:*

[52] **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց, էջ 649-650:*

թե՛ հավատացյալ-եկեղեցի փոխհարաբերության տեսանկյունից: Այսպիսով, մի քանի երկարատև պահքերը կարող էին պատճառ դառնալ պահքից հրաժարվելուն կամ հաճախ խախտելուն, քանի որ աշխարհական մարդու համար բարդ է տևական ժամանակ հրաժարվել աշխարհիկ սովորույթներից: Դա կարող էր նաև եկեղեցուց հեռանալու պատճառ դառնալ: Հետևաբար՝ տոնացույցում չէր կարող ամրագրվել պահք, որը գործնականում կյանքի չէր կոչվելու: Ուստի՝ հիսնակաց պահքի շրջանը շաբաթապահքերի բաժանելը հարցի լուծման լավագույն միջոց էր:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Վարդավառի Մեծ պահքը կենցաղավարել է միջնադարից, սակայն մնացել է ոչ կանոնական հարթության վրա:

Վիմական արձանագրությունները հուշում են, որ վանական միջավայրում Վարդավառի Մեծ պահքի գոյությունը պայմանավորված է եղել վանքի ներքին որոշմամբ: Կանոնագիրքը թույլ է տալիս եզրակացնել, որ աշխարհականների շրջանում այն հրահանգվել է ապաշխարողներին, ինչպես նաև կանոնական պահքերը խախտածներին: Մատենագրական աղբյուրները փաստում են, որ Վարդավառի հիսնակի մասին ամենավաղ հիշատակությունը թվագրվում է VIII դարով, թեև այն կարող է լինել ավելի վաղ: Վարդավառի հիսնակը X դ. վերջերին բաժանվել է շաբաթապահքերի՝ մեկ շաբաթ պահք, երկու շաբաթ ուտիք հաջորդական սկզբունքով: Ձեռագրական և մատենագրական սկզբնաղբյուրների վկայությամբ՝ այդ պահքը զատկական Աղուհացի օրինակով ունեցել է նույն ընթացքը՝ սննդային և կենցաղավարման բոլոր պահանջներով: Ըստ ամենայնի՝ Վարդավառի հիսնակը չի կանոնականացվել՝ հավատացյալի հոգևոր և աշխարհիկ կյանքը պահքի սահմանափակումներով չծանրաբեռնելու, հետևաբար՝ պահքերը խախտելու գայթակղության մեջ չգցելու նպատակով: Վարդավառի հիսնակի կենցաղավարումը զատկականի նման լայն տարածում չի ունեցել, սակայն ամբողջովին չի վերացել: Այն պահպանվել է մինչև XX դ. սկզբները՝ որպես Սուրբ Հովհաննեսի կամ Օխտն անվան պաս:

СОРОКАДНЕВНЫЙ (ПЯТИДЕСЯТИДНЕВНЫЙ) ПОСТ ПРЕОБРАЖЕНИЯ

АБРААМЯН А. А.

Резюме

Рукописные, летописные, канонические, эпиграфические и этнографические источники свидетельствуют о том, что начиная с раннего средневековья и до начала XX века армяне соблюдали пятидесятидневный пост Вардавара. Он не был внесен ни в одну редакцию Святцев (Церковный календарь), поскольку сложно было в течение одного года соблюсти три длительных поста (Пятидесятидневный Пост Преображения, Пятидесятидневный Пост Рождества, Великий пост). В монастырях соблюдение поста было обусловлено внутренним уставом. В мирской среде пост был обязательным для причащавшихся и тех, кто нарушал канонические посты. Пятидесятидневный пост Вардавара в середине X века был разделен на недельные посты: первая, четвертая и седьмая недели были постными, а интервалы между ними были Скоромными.

THE FORTY DAYS (FIFTY DAYS) FASTING OF TRANSFIGURATION

H. ABRAHAMYAN

Abstract

Manuscript heritages, epigraphical, canonical, lithographical, ethnographic sources and (dated from the Early Middle Ages to the beginning of the 20th century) are testified, that among Armenian coexisted Vardavar freewill lent. It was never augmented in any version of The Armenian Apostolic Church calendar in order not to overload the year by three fifty days lents (The *Hisnakats* fast of Transfiguration, The *Hisnakats* fasting of Christmas, Lent). In monasteries it was existenced by internal decision. Among laics it was kept by repentants and people, who broke the canonical fastings. At the end of the 10th century The Hisnakats fasting of Vardavar was divided into three parts as one week fasting and two weeks Meat-day by sequential basis.